

Ձայնային տատանումներ կամ Էլեկտրամագնիսական ճառագայթում

- Վերջապես, վերջապես թանձր հնչյուններ,- ասաց ու ձեռքը ճակատին տարավ Միքայելը. “Ես աղջիկն ամեն օր է եսպես խոսում, չեմ էլ հասկանում՝ ինչ է ասում: Երեւի մարդիկ կան, որ լսում են: Թե՞...”, - նայում էր բորտուղեկորդուհուն:

Անտանելի տոթ էր ներսում, ու բոլորը սպասում էին վայրէջքին: Մայքը խեղդվում էր. արձակեց վերելի կոճակը, հետո մյուսը. օդը չէր հերիքում:

-Ձուր, ջուր, խնդրում եմ, - մի բաս դուրս պրծավ Մայքի ընկերոջ՝ Շարաֆյանի փորից:
Միքայելը բարձրահասակ էր, նիհար, երկար գանգուր մագերով, աչքերը սեւ էին, մատները՝ երկար: Ականջի ետեւում միշտ կար մի գույգ բարակ վրձին.
Շարաֆյանենք միշտ իրեն ձեռք էին առնում, թե վրձինների պատճառով է, որ ականջները այնքան մեծ են ու նույնիսկ գանգուր ու խիտ մագերի տակից երեւում են:

Նկարիչ էր, ասում են՝ տաղանդավոր նկարիչ: Ամենակարեւորը իր արվեստում համարում էր գույները: Միշտ իր աչքերի եռանկյուն պրիզմայով անցկացնում էր արտաքին աշխարհն ու քամում էն երանգները, որոնց համադրությունը աչքին հաճելի մի բան է ստեղծում, դրա մի մասնիկը ձգում-մտցնում իր նկարների աշխարհ:

Անտանելի շատ էր ծխում, բայց երբեք մնացորդները դուրսը չէր գցում, դրա համար նա ուներ հատուկ բաժակ: Պարտադիր պետք է ծխեր պատուհանի մոտ, որ թթվածինը սողոսկեր էնտեղ, ուր մտնում էր ծուխը ու դրա ետեւից սրբեր մոխրագույնը, փոխարենը մի թափանցիկություն թողներ:

Դրսում անընդհատ փնտրում էր նոր գույներ, լույսեր, ստվերներ, մարդիկ, հայացքներ, մտքեր: Բայց ինքնաթիռում ի՞նչ գույն կտեսնես, երբ աչքերդ խլանում են ամպերի սպիտակից, երբ հայացքդ կուրանում-սառչում է հույսի աղբյուր էն միակ ուղեկորդուհու վրա, ում արտասանած անհասկանալի հնչյունները կաթկթում են թմբկաթաղանթիդ ու ինչ-որ անհասկանալի աղմուկ ստեղծում:

Երկար թռիչքից հետո կարծես հասան հայրենիք: Ինքնաթիռի պատուհանից երեւում էին լիքը սպիտակ կետեր, ահավոր շատ. եթե մրջյուններին սպիտակ ներկեիք, ու դրանք վազեին դեպի իրենց բունը, հավաքվեին իրար գլխի ու մի մեծ գունդ ստեղծեին, մոտավոր էսպիսի պատկեր կստացվեր: Որ ավելի մոտեցան, համատարած սպիտակը սկսեց բաժանվել սպիտակների, դրանց արանքում ասֆալտի գույն էր երեւում: Տպավորություն էր, որ վեցից յոթ աստղ էր ընկել երկնքից:

Երբ իջան, ուրվագծվեցին այդ սպիտակազգեստները, ու հասկացան, որ աստղեր չեն՝ բժիշկներ են: Այնպես էին ջերմաչափերը ձեռքներին սպասում, կարծես հրացանով մարտի դաշտ էին եկել:

Մայքը փոքրուց վախենում էր բժիշկներից:

Նրան կարծես հաջողվեց փախչել սպիտակներից, բայց մտերիմ ընկերոջ՝ Շարաֆյանի բախտը այդչափ չբերեց:

Հա, Մայքը փախավ: Բայց երեւի մանկուց իրեն հետեւած վախի պատճառով ու ոչ թե որովհետեւ գիտեր, թե ինչ է սպասվում իրեն՝ բժիշկների հետ գնալու դեպքում:

Վազում էր, շատ արագ, արդեն մոռացել էր, որ մայրը ժամանակին պատգամել էր Նույնիսկ իրեն մտքից հանելու դեպքում չմոռանալ մայր լեզուն, ու մի հայերեն Նախադասությունն ահավոր դժվարությամբ կկազմեր:

-Ես, ես չեմ... վախենում եմ... ես չեմ գնա Էնտեղ, -ու թը՛րիսկ, մի դեզի մեջ ընկավ, որովհետեւ գլուխը հարյուր յոթանասունմեկ աստիճան պտտեցրել էր ու դիմացը չէր Նայում Էն դեպքում, երբ ետեւից ընկածներ չկային. նրանց համար մեծ հաշվով միեւնույն էր, թե ով կփախչի. բոլորին էլ շուտով գտնելու էին ու առանց ջանք գործադրելու:

Եթե Մայքը ստամոքսը մի երկու օր սոված չթողներ, դեզը այդչափ ուժ չէր ունենա իր գիտակցությունը գողանալու համար:

Եթե հեռափոխադրումն ակտուալ լիներ, ուրեմն դեզը երեւի հենց այն սարքը կլիներ, որ քեզ պիտի կուլ տա ու թքի ինչ-որ ուրիշ աշխարհ:

Երրորդ համաշխարհայինն իր մաշկի վրա կրած Միքայելի մարմինը վերջապես արթնացավ ինչ-որ սենյակում, որտեղ Նույնիսկ չեն լսվում պատուհանի տակ սովորականի նման, ամեն առավոտվա մեքենաների անվերջ խցանումների ձայները: Թվում է, թե անցել է մի պորտալ, կամ էլ ո՞վ գիտի, գուցե, սեւ խոռո՞չն է հատել չարածճին, կամ էլ պարզապես փաբի իր այդքան սիրելի սառույցով վիսկին է գլխին մի լա՛վ դմդմիացրել, թեպետ, մարմինը հոգնածություն է արտաշնչում:

Եթե առաջին երկու պատերազմները ավարտվել են մեկի հաղթանակով ու մյուսի պարտությամբ, ապա երրորդը չի էլ սկսվել, Նույնիսկ չի ավարտվել հաղթանակներով ու դրան նմանվող բաներով: Դրանից հետո բոլորին էլ մեծ հաշվով միեւնույն էր՝ պարտվա՞ծ կողմում են իրենք, թե՞ հաղթած, մեռա՞ծ են, կենդանի՞ են...

Երրորդ համաշխարհայինին պատերազմ անունը չեն տվել, կամ որովհետեւ այն դրան չէր հասել, կամ որովհետեւ ավելին էր, քան պատերազմը:

Պարտվող երկրներ չկային, որովհետեւ պարտվողը ժողովուրդն էր, ոնց միշտ, ուղղակի էս անգամ՝ բոլոր պետությունների: Բայց ժողովուրդն ի՞նչ. հո ժողովուրդը չէր սկսել կռիվ-կռիվ խաղալ: Հետեւաբար ժողովուրդը չէր պատերազմում, բայց պարտվեց:

Իսկ պարտությունն էն պատիժն էր, որը կողպել էր բոլորին իրենց տան բանալիներից, ու բանալիներն այլեւս չէին բացում դռները:

Ի վերջո, Մայքը աչքերը բացեց եւ բացելուն պես՝ մեծ ու կլոր աչքերի դիմաց զգվեց թրթռթրթրթրթրացող ժամացույցասլաքը, որը նրա ժամանակից խժռել էր գրեթե մեկ առավոտ եւ դեռ ծամծմում էր: Սենյակի պատերը հափշտակող լույսը, որը գալիս է անմիջապես դիմացի պատին մեխված պատուհանից, ստիպում է մոտենալ իրեն եւ զննել ներսում եղած-չեղածը:

Դեպի դուրս բացվող Էկրանի շուրջ ոչ ոք չկա, մռայլված շենքերն են եւ կեսօրվա այս ժամին բոլոր խանութների վրա փակցված սարսափելի գրառումը՝ “Փակ է”: Քաղաքը շատ անծանոթ թվաց Մայքի՝ ամեն ինչ որսացող աչքերի պատին: Տան ներսում գրեթե ամեն պատի վրա, նկարներ կան փակցված, իսկ մահճակալի կողքին՝ հին ու մաշված մի պահարան, որի փոշին վկայում է վաղուց գնացած ու այլեւս ետ չեկած ինչ-որ մեկերի մասին...

Գետնին փետրահան եղած վրձիններ կան, մի փոքրիկ սեղան, աթոռ եւ հեռուստացույց, որի ալիքների առկայությունը առավելություն չէր, որովհետեւ ամեն ալիքում պատվող նյութի բովանդակության նույնությունը խելագարության էր հասցնում:

Մայքը վահանակով թերթում էր ալիքները՝ որեւէ պիտանի բան գտնելու նպատակով, բայց Էդ օրերին պիտանի բաներ հաստատ հեռուստացույցում չեն փնտրում: Թեկուզ թերթերում, ամսագրերի շապիկներին, հին հեռախոսահամարների նոթատետրերում, գուլպաների մեջ, գոնե՝ հեռուստացույցի ետևում, բայց ոչ մեջ:

Հավանաբար սենյակ էր. հանգիստ էր ու միաժամանակ մարմնի բջիջները չրեցնող սարսափելի: Բայց Էդտեղից անհամապատասխան թարմ ներկերի հոտ էր գալիս:

Սեղանին ծխախոտի տուփ փայլեց ու Մայքի աչքերը կլանեցին փայլի կայծերն ու իրենք անդրադարձրին: Վերցրեց մեկը ու գնաց լուցկի փնտրելու: Տարածքում տեղ գտածը կոկիկ դասավորված բնութագրելը, իհարկե, ճոխություն կլիներ, բայց Մայքը տակնուվրա արեց սենյակը մոլագարի պես:

Չէր գոռում. բացարձակ: Բայց իր փոխարեն սենյակն էր գոռում՝ դրոյդուկից: Մի-երկու կտոր ապրանք ջարդելուց հետո ձեռքերը ինչ-որ լուցկու տուփ գտան, ու ձեռքերի դուրս զցված երակները ներս զցվեցին:

Բացեց:

Կոճակներ գտավ: Ստորին ծնոտը առաջ բերեց, վերելի ու ներքելի ատամների միջեւ եղած տարածություն նվազագույնի հասցրեց, բայց շարունակում էր չգոռալ: Մի ձեռքը կտրուկ տարավ դեմքին ու հարվածից զգաց, որ քիթ ունի, ապա ափը բարձրացրեց վերել, դրանով գրկեց աչքերը, տարավ ճակատին, չորս մատները սահեցրեց վրայով՝ ճկույթով էլ ունքը սեղմեց: Գցեց տուփը:

Ատամների սիմֆոնիան ավարտելուց հետո նայեց գետնին ու տեսավ, որ մի հատիկ լուցկու չոփ, այնուամենայնիվ, տուփի մեջ կար: Միայն թե ծխախոտն էր պետք գտնել:

Եթե շարունակեի անել այն, ինչ սկսել էր, իր ստեղծած պարույրում հավերժական ցիկլի մեջ էր ընկնելու ու գտներ ծխախոտը, կորցներ լուցկին, գտներ լուցկին, կորցներ ծխախոտը ու այքնան, մինչեւ հոգնածությունը հարվածեր գլխին ու բնագոյը քնել ստիպեր:

Բնագոյը ստիպեց քնել:

Իսկ Շարաֆյանն արթնացավ երագի պատճառով: Աչքերը կիսաբաց արեց ու միայն տեսավ ինչ-որ կաթնագույն տարածք: Մոտավորապես քառորդ ժամի չափ անդադար նայում էր ու նույնիսկ չգիտեր, թե այդ կաթնագույնն ինչու էր գտել իրեն:

Պարզվեց՝ ինքն էր գտել դրան: Առաստաղը փքվեց, ու կաթնագույնը գորշացավ: Վերելում վաղուց արժեր մի նորմալ տանիք սարքել, որ անձրեւների մասին պատուհանից իմանայիր:

Նստեց անկողնուն ու շուրջը նայեց. հայացքը ճմրթվել էր երկար քնելուց ու բերանը երկու կողմից կախվել էր դնչի վրա, դուռը՝ վզի, վիզը՝ մարմնի: Ոտքի կանգնեց:

Դուռը կարծես կատու էր ճանկռել: Սեղանիկ կար, որի վրա կիսով չափ լիքը թեյի բաժակ էր դրված...

Մի պահ պատուհանից նայեց դուրս ու հիշեց Շիրվանզադեի ստեղծագործությունները մեկը. “Ներսս քառս, դրսում քառս, Եսպես ինչքա՞ն”...

Ոստիկանության մեքենաներ կային: Շարաֆյանը նույնիսկ իր գտնվելու վայրը չգիտեր: Ոնց բոլորը: Դեպի դուռը սահեց, փորձեց բացել ու դուրս գալ: Կարծես կողպված էր:

Շարաֆյանը՝ Մայքի ընկերը, երիտասարդ գործարար էր, 31 հազիվ լիներ, կամ չլիներ: Թվերի մեջ մեկ-մեկ ծննդյան ամսաթիվն էր մոռանում, մեկ-մեկ՝ ամուսնության, մեկ-մեկ՝ ընդհանրապես, որ ամուսնացած է: Իհարկե թվերին օգնության էին հասնում էն փոշիները, որոնք ներս էին գնում ամեն ինչի հետ, բայց ոչ ամենուր: Հատուկեւս մարդիկ գիտեին կախվածության մասին:

Հաստավիզ ու փորատեր չէր, որովհետեւ հետեւում էր իրեն, բայց փոշիներին հետեւում են խոտերը, խոտերին՝ ներարկիչները, ներարկիչներին՝ այն ամենը, ինչը շուտով պիտի կերտեր մի նոր Շարաֆյան:

Դուռն իրոք կողպված էր: Շարաֆյանը չէր էլ հարցնում, թե ուր է ընկել: Միայն նետում էր իրեն դեպի դուռը, դռնից էլի ետ, որ թափ հավաքի ու նորից՝ դեպի դուռ: Միայն թե դուռը դեպի իրեն էր բացվում, ու ինչքան էլ մարմինը դռներին խփեր, դռները չէին բացվելու:

Հետո՞ ինչ, թե դուռը չի բացվում: Տարածքում մեկը կլինի, չէ՞, ու գոռում էր Շարաֆյանն, ակնկալելով, որ ձայնամեկուսիչ պատերն ուր որ է իր ձայնը կհասցնեն ուրիշ սենյակներ, եթե դրանք կան, ու մեկն անպայման կգա իրեն օգնության:

Իսկ Մայքը ոչ էլ մոտենում էր դռանը. “Մեկ ա չգիտեմ ուր եմ. չգիտեմ դռան ետեւում ինչ կա. միգուցե մեծ դեղին վիշապ, որի բաշը կրակի գույնից անցնում ա ծիրանի, իսկ աչքերն, ասենք, մեր հարեւան Ռուդոլֆի ձեռնափայտի պոչի գույնի են: Եդ գույնը կամ անուն չունի, կամ ես չգիտեմ. ինչ-որ կապույտ, որ մի քիչ դեղին էր, մի քիչ կանաչ, բայց որ գույնը հարցնեին, վստահ չէիր լինի՝ կանաչ ասես, կապույտ, թե դեղին”:

Մայքը հիվանդանոցներն ատում էր, որովհետեւ էնտեղ փակում են հիվանդներին, ոնց հոգեբուժարաններում, ու ավելի լավ կլիներ հենց հոգեբուժարանի պես

սպիտակ սավաններով կապկպեին, մի երկու ասեղ մտցնեին ջանդ, ու խորասուզվեիր էնտեղ, որտեղ մենակ երեւակայորեն էիր շարժվելու ու, թեկուզ փակ պատերի մեջից, թափանցիկ ոչ մի բանի պես կանցնեիր:

Մայքը երբեք ներս չէր մտնում էն դռներով, որոնք իր ետեւից փակվում էին, որովհետեւ պարանոյիկ երեւակայությունը վախենում էր էն ամեն ինչից, ինչը չէր երեւում. իսկ դռան ետեւից ոչինչ չէս տեսնում:

Իսկ կամքին հակառակ մտած լինելու դեպքում չէր բացում դռները, եթե նախօրոք չասեին ինչ է սպասվում իրեն դրա ետեւում, իսկ ավելի լավ կլինի ասեին՝ ինչ չի սպասվում. օրինակ՝ դեղին վիշապ:

Փոխարենը տան տարածքը անգիր անելը չէր խանգարի: Հոնքերը այքան էր կիտել, որ ճակատը կնճռոտվել էր ու իր՝ արդուկներ չտեսած շորերին նմանվել: Գանգուր մագերը ճենճոտվել էին, կարծես մանկապարտեզների սպառնալիքն իրականացել էր ու մի աման ճաշը գլխին էին լցրել:

Դե սենյակի զգգզված վրձիկներն ու պատի նկարները, ներկերի այնքան ուժեղ հոտը, որ կարող էր ասսթմատիկ հիվանդությունն ունեցող մեկի շնչառական համակարգը քերել, հուշում էին, որ Մայքն էստեղ իրեն մի զբաղմունք կգտներ:

Էն պահարանի գլխին փոշիներից բացի էլի բաներ էին թագավորում. ինչ-որ գծագրեր, լիքը խառը-խուռը սեւագրեր, մի հաստ կապոց, որի մեջ սովորաբար թե ամեն ինչ կարելի էր գտնել, ու մի երկու դատարկ կտավ: Ու եթե Մայքն այդչափ բոյով չլիներ, մտածելու էր, թե պահարանը միայն փոշի է, որ ունի:

Իջեցրեց էդ գաջի գույն ունեցող կտավները, որ դեղնել էին արեւից ու անտարբերությունից, մի աթոռ վերցրեց, որ նստի, մյուսն էլ շուռ տվեց, որ վրայի եղած-չեղածից ազատվի, էդպես շուռ տված դրեց սեղանին, կտավները վրան հենեց ու սկսեց էլի տակնուվրա անել սենյակը:

Ձեռքով մի երկու գրքի գետնին հրավիրեց, մի քանի նկարի շրջանակ ջարդեց, պատառաքաղները գետնին ընկան, որովհետեւ սպասքի դարակում ներկեր էր ման գալիս ու գտավ վկացարանի տակ, ուր խոնավ էր ու ներկերն էլ չէին չորանում: Միայն թե անտանելի բորբոսի հոտ էր գալիս եղտեղից, բայց եթե բորբոսն իրեն դեռ չէր խանգարում, թող մնար:

Մատիտներ չկար եղտեղ նկարելու, կամ էլ դրանք ման գալու հավես: Փոխարենը գազ կար, որից կարելի էր միացնել ծխախոտն ու ծուխով էլ հենց նկարել, միայն թե նկարները կտեսնի մենակ ինքը ու երկար ուսումնասիրելու ժամանակ չի լինի, ինչի պատճառով էլ հետո անընդհատ էդ նկարներն էին աչքի առաջ լինելու՝ իրական էին, թե ցնորքը խժռել էր Միքայելին, իսկ երեւակայությունն այդչափ կատարելագործվել:

Մի ծաղկաման էլ կար պատուհանի մոտ, որը ավելի շուտ հողաման էր, որովհետեւ դրա մեջ ծաղիկներ չկային ու երբեք էլ չէին եղել: Հողը շուռ տվեց գետնին ու մոխիրը սկսեց դրա մեջ հավաքել ու երկար-երկար ծխել ու դուրս նայել, որ հասկանա գոնե, թե ինչ հրեշներ են ամեւանգել մոլորակը ու կերել մարդկանց:

Էդպես էլ չհասկացավ. ներս եկավ, պատի վրայի նկարներից մեկն իջեցրեց, այն մեկը, որն ամենից քիչն էր դուրը գալիս, զգույշ հենեց պահին, որովհետեւ քիչ էր դուր գալիս, թե շատ, մեկը դրա վրա տանջվել էր, պատի մեջից մեխը քաշեց-հանեց, որովհետեւ պատի ծեփն էլ չէր փայլում որակով ու մեխի դուրս գալիս մի երկու սանտիմետր շառավղով պատից ծեփ թափվեց հատակին:

Մեխի ծայրը լեզվով թրջեց, գնաց, պատուհանի մոտից վերցրեց այն ծաղկամանը, որ հողաման էր ու հասցրել էր մոխրաման դառնալ, մեջը մեխը թաթախեց ու սկսեց գծեր քաշել կտավի վրա, որոնք սկզբի մի քանի օրն ուղղակի գծեր էլ մնացին:

Իսկ էս ողջ ընթացքում Շարաֆայի ագրեսիան հասցրեց ծանոթանալ ոչ միայն դռան, այլև պատերի ու պատուհանների, հատակի հետ նույնիսկ, ու անմասն մնաց միայն առաստաղը, եթե ծանոթությունը ֆիզիկական շփում համարենք:

-Չաբերս, հաբերս բերեք, գրողի տարածներ, - շարունակ հնչում էր ուժասպառ եղած էն մարմնից, որն իրեն նետել էր առաջին պատահած անկյունը, որովհետեւ ուրիշ ընտրության հնարավորություն չկար: Էսպես Շարաֆյանը մի քանի ժամ շարունակ ուժ էր հավաքում, որ հետո ուժը փոխանցի պատերին ու էլի մի տեղ վայր ընկնի:

Բայց անընդհատ կրկնելը աճ չէր ապահովի: Պատուհանը բացեց, ու ներքեւ նայելուց մեռակ գլխապտույտ սկսվեց ու ինչ-որ անտեսանելի քամի ներս բրդեց իրեն ու վստահեցրեց, որ Էդտեղից ցատկելու դեպքում կաթվածն ավելի շուտ կհասնի իրեն, քան ինքը՝ գետնին:

Էդ բարձրությունը կրճատել էր պետք. կամ պիտի սպասեր, մինչեւ շենքը գետնին իջներ ու ներքեւի չորս հարկերը գոնե կուլ տար, կամ մուտացիայով ինքն էնքան բոյովանար, որ ոտքերը դուրս կախեր ու գետնին հասնելու համար բավական լիներ տազը պատուհանագոգից քաշել:

Բայց ինքն այդքան ժամանակ չունեիր:

Գնաց քնելու ու երբ արթնացավ, առաջին անգամ շուրջը նայեց. մինչ դա չէր նայել, որովհետեւ իրեն միայն դուրս գալն էր հետաքրքիր: Անտանելի չէր սիրում, երբ ներսում նեղվածք էր, ամեն գնով ուզում էր տարածքն ազատել ու իրեն խանգարող ամեն ինչը մի ձեւ դուրս բերել սենյակից. մոռացել էր, որ դուռը փակ է:

Մոտեցավ դռանը, որ դուռը բացի. “Էէէ, գրողի տարածներն էլի ինձ մի տեղ մոռացել են. Էդ լրբերին վստահել չի կարելի, ողջ գումարս էլ հետներն են վերցրել: Տեսնես ո՞ր մեկի տանն եմ:”

Ուզում էր տեղ շահել՝ ի հաշիվ դասավորվածության ու սկսեց տեղաշարժել կահույքը: Հատակը լիքը անկանոն ֆորմաների էր բաժանված, մեծ, փոքր, հաստ ու բարակ ու այդ իդեալիստի հոգեբանությունը ամեն ինչի համար հարմար բազմանկյուն էր փնտրում: Մարմինները սահեցնելիս՝ երբ հատակի եռանկյունն ու բազկաթոռի քառակուսին հանդիպեցին, կանգնեց, որ հանգստանա ու մի երեսուն վայրկյանից ինչ-որ ռուս պառավ ռոբոտի ձայն լսվեց. “Объект не совпадает.” “Ես ձեր... Մի ջահել աղջիկ չկա՞ր, ձայնագրեիք: Էն էլ ռուս:

Ծրագրավորման ուղեղը... ախ ես ձեր, ու՞ր մնաց կիրքը, ու՞ր է ոգեշնչումը:” “Ваш голос не возможно расшифровать, пожалуйста говорите ясно и громко.” “Էս ի՞նչ խաղեր են, ի՞նչը չի համընկնում,” - քչիչաց քթի տակ: “Ваш голос не возможно

расшифровать, пожалуйста говорите ясно и громко.” “Աաա, դե հերիք է խոսես, սատանի ծնունդ, թող մտածեմ հանգիստ” “Ваш голос ...”:

Շարաֆյանը բուժը տարավ բերանը ու սկսեց ամենալարված շարժումներով հեռացնել եղունգի սպիտակ հատվածը, հետո մատի կողքի կաշին՝ ողջ ընթացքում մի կետի նայելով ու կետում եղած օբյեկտները անտեսելով:

23 : 54

“Սատանի ծնունդ, ես երեկ էլ այստեղ էի”, - ինչ-որ դեժավյու Շարաֆյանի հիշողությունը խուտուտ սովեց: Ու վազեց սենյակի եռանկյուն սեղանը սալիկի վրա բրդելու: “Ինչ էլ ծանր է անտերը, ու՛ֆ” - ու էսպես մի չորս րոպե բրդեց:

23 : 59

“Вы нашли правильную фигуру, поздравляем.” “К сожалению ваше время истекло.” Ու Շարաֆյանի քունը տարավ:

Իսկ Մայքը շարունակում էր նկարել. “Չը՛մ, լավ պատկեր է” , - նայեց իր խզբզոցին:

Առավոտյան Շարաֆյանն էլ ոչինչ չէր հիշում. “Գլուխս տրաքեց. երեկ երեկի շատ եմ խմել, բան էլ չեմ հիշում, գրողի տարածը, էսօրվանից թարգելու եմ, եթե իմանամ՝ այս անգամ ուր եմ ընկել: Մատաղ եմ անելու, հա, հաստատ:”

“Էս ինչ զիբիանոց է, մեկը չկա՞ տեղավորի ես կահույքը: Էհէէ, Ախ ես դուռն էլ փակ է երեկի: Դրամապանակս չկա՞”:

Ուզում էր եռանկյուն սեղանը բրդել. “Действие недоступно.” “Էս ի՞նչ արեցի: Երեկ էն գերզգայուն սենսորներն են, հա, ձեռքերդ իրար ես քսում, գիտեն թե իրենց բան ես կարգադրում: Ինչ էլ ծանր է անտերը, լավ թող մնա էստեղ,” ու թողնում է Էդտեղ ու մոտենում բազկաթոռին. “Չը՛մ, պատի տակ լավ կնայվի” “Ваш голос не возможно расшифровать, пожалуйста говорите ясно и громко.” “Սլուշայ, բրատ, դե այսինքն, սիստրա ջան, յա տոտո խածել պասավետովացոցա, էի, եսի կրեսլը պաստավիժ տամ, - ցուց է տալիս, - խառաշո՞ բուձետ, դա՞” “Найдите прямоугольный разрез.” “Էէէ, ձեզից ով ա խեր ունեցել, որ ես ունենամ: Ես ասում եմ՝ ուր դնեմ, ինքն ասում ա՛՝ ռազրեզ”, “Ваш голос ...”: “Դե գոլըսդ կտրի, երբ են գալու՝ տեսնեմ՝ ինչ ենք անում: Տանեմ երեկի հեկց Էստեղ էլ դնեմ”:

Բրդեց, տարավ պատի տակ դրեց. “Объект не совпадает.” “Ի՞նչ ա” “Ваш голос ...” “Ահաա, գնաց էի”:

Ու էսպես ողջ օրը երկխոսությամբ, իսկ իրականում՝ մենախոսությամբ անցավ, Շարաֆյանը տեղավորեց ամեն ինչ, մի քիչ ջղայնացավ, ու օրը մթնեց, սա էլ գնաց քնելու:

23 : 54

Շարաֆյանը քնած էր:

23 : 59

“К сожалению ваше время истекло”.

Չաջորդ օրը ամեն ինչ սկսվեց նորից:

“Ինչ էլ սիրուն սենյակ ա, լավ էլ կահավորել են, որ հիշեի՝ ում տանն եմ... Էնքան լավ կլիներ, հավերժ Եստեղ էլ կմնայի: Տեսնես, դրամապանակս ու՞ր է” “Ваш голос не возможно расшифровать, пожалуйста говорите ясно и громко.” ...

“Յաաա, ես չլինի՞ վիրտուալ իրականություն եմ ընկել”: “Ваш голос”... “Ես փչացած ռադիոն ո՞վ ա միացրել: Ես արհեստական բանականությունն ավելի կատարյալ էի պատկերացնում... Հենց խոսաս՝ միանգամից լեզուդ հասկանա, քո լեզվով էլ խոսա, այ էդ՝ հա՛...”:

“Խնդրում ենք սպասել, լեզվի կարգավորումները ընթացքի մեջ են. այլ հրահանգներ”:

Նստեց բազկաթոռին, հետո սկսեց պտտվել տնով ու ջրով լի բաժակն Էնպես թափահարել, կարծես կոնյակ է խմում:

Ամբողջ օրը հարցրեց ու պատասխանեց, խոսեց ամեն ինչից իր վիրտուալ ընկերոջ հետ:

Էլի

23 : 54

“Աստված ի՛մ,”,- Էլի հիշեց ամեն ինչ: “ՉԷ՛, չէ, Եսպես թողնել չի կարելի, թուղթ արագ”,,- ու սկսեց թուղթ ու գրիչ ման գալ:

23 : 59

Գտավ, բայց այ գրել չհասցրեց ու Էլի քնեց: “К сожалению ваше время истекло.” Մայքի խզբզանքները ամեն օր ավելի էին խզբզվում, բայց դրանց մեջ ինչ-որ գեղեցիկ դետալներ էին ավելանում: Մերկ կնոջ էր նման. օվալները ուրվագծում էին կոնքերն ու վիզը, իսկ ոսկրերն այնքան հստակ գծերով էին: Մնացած մարմինը լողում էր նկարում: Հստակ չէր, առավել եւս մոխիրը նկարելիս լրգվում էր թղթին ու ավելի խճճում պատկերը: Բայց ձեռքերն ու ձեռքերի մատանիները հստակ էին երեւում. դրանց արանքում ծխամորճ կար: Կարծես բացարձակ նյութեղեն չէր, կամ էլ ինչ-որ մետաքսից էր, որ հյուսվում էր մատներին ու թեթեւ կախված մնում օդի մեջ, ու չնայած մոխիրը սեւ էր, ինչ-որ վարդագույն պատկեր էր ստեղծում: Մատանիներն էլ անգույն էին, բայց ամբողջ գմրուխտը, քարի քաշն ու ինքնությունը փոխանցում էին:

Շարաֆյանի օրն Էլի մի ձեւ գլորվեց ու հասավ սպասված ժամին:

23 : 54

Էլի հիշեց ամենն ու վերցրեց թուղթն ու գրիչը. “Ես Շարաֆյանն եմ, չգիտեմ ինչ սկզբունքով, բայց օրվա մեջ կորցնում եմ հիշողությունս ու դա վերականգնվում է գիշերը 23:54 ից 00:00: Սենյակում կահույքը հարկավոր է դասավորել՝ ըստ հատակի: Չգիտեմ, թե դրանից հետո ինչ է լինելու, բայց պետք է Էդպես արվի: Սեղանն իր ճիշտ տեղում է, հատակի վրա կան անկանոն պատկերներ, դրանք լցնում են հատակի մնացած մասը ու շփոթեցնում: Սա գրում եմ, որպեսզի օրվա ընթացքում կարողանամ մի բան անել”:

23 : 59

“К сожалению ваше время истекло.”

Առավոտը անկողնուց ելավ. “Ես Շարաֆյանն եմ, - այո, միանշանակ, - չգիտեմ՝ ինչ սկզբունքով, բայց օրվա մեջ կորցնում եմ հիշողությունս, - մի քիչ քիչ որ խմեմ,

բոլոր սկզբունքներն էլ կհասկանամ, - ու դա վերականգնվում է...”,- կարդում էր ու ինքն իրեն մեկնաբանում:

“... կարողանամ մի բան անել, - ահա հահ” բարձր խնդաց,- “իհարկե, ոնց չէ: Մեկը հաստատ գիտի, որ շատ եմ խմել, այլարում են իրենց կահույքը դասավորել, ինձ են գործի դնում, ոնց չէ, ահա հահ”:

Մայքը արդեն որերորդ օրն էր նկարում: Ամեն երեկո սառնարանը բացում է դատարկ, առավոտյան՝ լիքը: Բայց ոչ էլ նկատում էր. կարելորդ՝ նկարը տեղում էր:

23 : 54

“Էլի մի հիմարություն ասել եմ, ի՞նչ անեմ, որ վաղն էլ նույնը չկրկնվի”, - ու թղթի վրա ավելացրեց ողջ պատմությունը, ինչը հիշում էր օդանավից:

“Ստորագրե՛մ”- իր ստորագրությունը երբեք ոչ ոք չէր կարողացել կեղծել:

Մյուս առավոտ էլի վերցրեց թերթիկը. “Մենք ինքնաթիռում էինք, ընկերոջս՝ Մայքի հետ էինք: Մայքը ասում է փակ տարածությունները, կլաուստրաֆոբիա չունի, ուղղակի չի սիրում: Ու ինքնաթիռի մեջ իրեն վատ էր զգում, հազում էր, որովհետեւ խեղդվում էր: Աշխատակիցներն էլ մտածեցին, թե նա հիվանդ է, ու դրսում մեզ դիմավորեցին բժիշկները: Մայքը դրանցից սասափում է ու դրա համար էլ փախավ, իսկ ինձ ներարկեցին ու բերեցին էստեղ, բոլորին մեկուսացնում էին”:

“Ինչ էլ ծանր են անտերները”, “Ով է հորինել էս հիմարությունը, ես ձեր” “Ваш голос...”, “Իսկ եթե ինձ համար միեւնու՞ն լիներ, եթե մեջիս իդեալիստը չլիներ, պիտի սատկե՞ի էստեղ”, “Объект не совпадает”: “Ուտելու բան կա՞” “Էն աղջկան կանչեք խոսենք, հա՞”, “Ես կխելագարվեմ”, “Խնդրում ենք սպասել, լեզվի կարգավորումները ընթացքի մեջ են. այլ հրահանգներ”, - ժամային ինտերվալներով լսվում էին սրանք, մեկ-մեկ էլ կրկնվում էին:

“К сожалению ваше время истекло”:

Հաջորդ առավոտյան գրեթե ողջ գործն ավարտել էր. “Լեզվի կարգավորումներն արված են. Ձեր լեզուն հայերե՞նն է: Խնդրում ենք հաստատել պատասխանելով՝ “այո” կամ...” “Այո”, “Շնորհակալություն”:

Նորից կարդաց գրածները ու սկսեց իր ամենօրյա զբաղմունքը:

“Մնաց մեկ օբյեկտ”, “Հա, սառնարանը, հիմա, հիմա: Ինչքան էլ շատ

քառակուսիներ կան”...

“Օբյեկտը չի համընկնում”: Տեղափոխեց, “Օբյեկտը չի համընկնում”, “Օբյեկտը չի համընկնում”... “Գրողի տարած, իսկ որտե՞ղ է տեղդ”, “Փնտրեք քառակուսին”, “Ի՞նչ քառակուսի”, “Աստիճան”, “Ի՞նչ աստիճան”, “Փնտրեք աստիճանը,” “Ի՞նչ կապ ունի էդ էստեղ”, “Փնտրեք աստիճանը”...

Գտավ աստիճանը. “Օգտագործեք ըստ նշանակության”, “Այսի՞նքն”,

“Օգտագործեք ըստ նշանակության”, “Տեղդ իմանայի՛ վաղուց կոտրել փշրել էի, մետաղի ջարդոն”, “Ձեր հարցումով նյութեր չեն գտնվել: Վերածե՛լակերպեք հարցն ու փորձեք նորից”,

“Նշանակություն, նշանակություն... Ի՞նչ նշանակություն ունի աստիճանը: Նայած՝ ինչի համար ես օգտագործում: Վարագույր լինե՞ր՝ բարձրանալի, կախե՞ի, բայց ինչ նշանակություն:”

“Թեյնիկից թեյը լցնում եմ, ոչ թե խմում, բաժակից խմում եմ, ոչ թե բաժակը լվանում”, “Աստիճանի վրա բարձրանում եմ” պատասխան չկա:

Բարձրացավ: “Չետո՞”, - ու վերեւ էր նայում: “Ներքեւ”: “Ներքեւ իջնե՞մ”: “Ներքեւ”: “Աստված իմ, ինչո՞ւ քո փոխարեն մարդ չեմ դրել”: “Ձեր հարցումով նյութեր...”:

Ներքեւ նայեց: Կահույքի դասավորությունը սլաքի էր նման եւ ուղղված էր դեպի պատը. “Էնտեղ քառակուսիներ չկան, ու՞ր եմ դնելու”: “Կան”: “Չկան”: “Ուզում եք փոխել լեզու՞ն”: “Աստված”...

Երկար զննեց: Իրոք որ՝ քառակուսիներ չկային: Բայց կային եռանկյուններ: Ուղղանկյուն եռանկյուններ: Իրար հավասար չորս ուղղանկյուն եռանկյուն: Իրար կողքի: Դրանք իրար հետ հենց քառակուսի էին. “Յո՛ւմ, փորձե՛ք”:

“Դուք լուծեցիք խնդիրը. շնորհավորում եմք” “Շնորհակալություն”, - ասաց ու մի տեսակ հարցական դեմքով շուրջը նայեց, որ հասկանա՞ ինչն է փոխվել:

Փոփոխություններ կարծես թե չկային:

“Դու՛ռը” - գոռաց մի քանի րոպեից: Բայց դուռը չէր բացվել:

- Իսկ հետո՞ ինչ անեմ:

- Դուք ունեք ձեզ հարկավոր ամեն ինչը:

- Ինչի՞ համար հարկավոր: Ես նույնիսկ չգիտեմ՝ ինչ եմ անում:

- Դուք ունեք ձեզ հարկավոր ամեն ինչը:

- Լավ, ես ունեմ լիքը անպետք տեխնիկա, որը գծով դասավորված է, ունեմ սառնարան, ունեմ աստիճան ու ոտքեր, որոնցով կարող եմ քայլել: Նույնիսկ կարող եմ աստիճանով բարձրանալ, տես, - հեգնական տոնով բարձրացավ աստիճաններով: Նորից նայեց.

- Դե սլաքը դեռ սառնարանն է ցույց տալիս ու ի՞նչ:

“Պետք է գրանցել ես ամենը, թե չէ վաղն էլի կմոռանամ, - ու սկսեց գրել, - քուսս շատ է տանում, է, ուղեղս բավականաչափ մտածել է այսօր, մնացածը վաղը”:

- Տես, առանց քո օգնության հասկացա, որ պիտի գրեմ, որ վաղը չմոռանամ: Իսկ դու կարծում ես՝ հիմա՞ր եմ, - ծիծաղեց ու գնաց նետեց իրեն անկողին:

Մայքն էլ ավարտեց նկարը: Խզբզանքից հասանք մոխրե արձանի, որը խորություն ունի ուրիշ իրականության մեջ ու մեր աչքերում, բայց ձեռքերի համար դրանք ուղղակի գծեր են, ու ոչ միշտ է ձեռքերին հաջողվում որսակ խորքի ձկները:

Շարաֆյանի առավոտն էլի ուղեկցվում էր երեկվա ու բոլոր նախորդող օրերի հետ ծանոթանալով. “Գրողի տարաաած, մի՞թե իրոք ես եմ ստորագրել” - ամեն առավոտ նույն արձագանքն էր: “Իսկ դրամապատկիս մասին ոչինչ չե՞մ գրել”:

Բարձրացավ աստիճանին. “Ախիսի, քուսս տանում է, ստամոքսս էլ էշի պես ոռնում” ու նայեց սլաքին: “Ահիհ, սառնարանումս տեսնես մի բան կա՞” իջավ, բացեց սառնարանը. “Յա,

լավ էլ շատ ուտելիք կա, գուցե երե՛կ եմ պատվիրել ու չեմ հիշում” սկսեց լրացնել հիշողության բացատները:

Բացել էր սառնարանը ու կախվել դրա դռնից, հետո նստել էր մեջը ոտքերը դեպի դուրս. “Անտանելի շոգ է, մի կանգիցյաներ էլ չեն դրել տխմարները, հեյ, այ ապուշ

ռուս պառավ, անուկ ի՞նչ է , ո՞նց կանչեմ քեզ” ձայն չկա: “Սլուշայ, պառավ, վկուչի կազիցյանեռ, մե տուտ դուշնը” ոչ մի արձագանք: “Ես տխմարը հայերեն չի՞ խոսում” “Ուզում եք փոխե՞լ լեզուն” “Ահի, հայերեն էլ գիտե՞ս, լսիր, օդորակիչը միացրու, հա՞” “Եստեղ օդորակիչներ չկան. դրանք վնասում են բնությունը” “Սառնարանն էլ են վնասում, հետո” “Այս սառնարանները ֆրիոն չեն արտադրում” “Բա ի՞նչ են անում... Ու՞ր է սրա մատոռը, սպասիր, ես հեսա կգտնեմ” ու սառնարանի ներսից սկսում է բզբզալ. “Ահա, ես ի՞նչ է” ինչ-որ ճոճվող երկաթե բանի Է դիպչում. “Ձեր սառնարանը փչացած է, գիտե՞ք” նայում է վերեւ: “Սառնարանը սարքին է” Էլի Էդ կտրտվող ռոբոտային հնչունները:

Ու Եսպես ինքը մի բան էր պնդում, Էն ձայնն ուրիշ բան ասում, ու ինքն էլ ինչ-որ բան էր փնտրում ու չէր գտնում սառնարանում: “Սառեցի, գիտե՞ս” դուրս եկավ սառնարանից ու փակեց դուռը: Երեկոյան Էլի մտավ ու զգաց, որ ուտելիքը շատացել է. “Ես որ ներսում էի, այսքան բան չկար, հաստատ, ես չէի տեղավորվի” ու կասկածը սկսեց տանջել սրան:

Գիշերները լուսացնում էր սառնարանի բաց դռան առաջ, որ հասկանա՝ Էդ ինչպե՞ս: Շատ ժամանակ էլ դուռը չէր փակում, բայց աչքը կանում էր: Ուտելիքի քանակը չէր ավելանում. դե ուտելիս պակասում էր, բայց չէր ավելանում: Եսպես մի օր հոգնեց. դուռը շխկացրեց ու գնաց քնելու: Ես ողջ ընթացքում ամեն օր գրում էր ու մի հաստ օրագիր էր կազմել արդեն:

Առավոտյան սառնարանը բացեց. Էլի լիքն էր: “Չէե, դե ծիծաղելի չի” նյարդայնացավ ու դատարկեց սառնարանի ուտելիքը գետնին ու սկսեց բզբզալ ամեն դետալի վրա: Ներսում ցուրտ էր ու ձեռքերը սառնությունից Էլ չէին աշխատում:

“Ու՞ր է Ես անտերի լարը, անջատեմ հանգիստ աշխատեմ” բայց լար չկար: “Անտերը որ բրդում էի պատի մոտ, ե՞ս եմ միացրել: Ամեն ինչ Ես պատից է, հա, մինչ այդ համ փորս էր դատարկ, համ ինքը: Ու՞ր է գրողի տարած վարդակը” ու փորձում էր տեղաշարժել սառնարանը: “Գործողությունը հասանելի չէ” “Ինչու՞” “Դուք արդեն տեղադրել եք սառնարանը” “Ուզում եմ տեղափոխել” “Գործողությունը հասանելի չէ” “Որտե՞ղ է վարդակը” “Վարդակ չկա” “Իսկ ինչպե՞ս է աշխատում” “Էներգիան արեւային է. ստանում է պատից” “Լավ, ինչու՞ է ամենն Եսքան տարօրինակ” “Ինֆորմացիան հասանելի չէ” “Ինչու՞” “Ինձ հասանելի է մենակ պատերից ներս կատարվողը” “Բայց սառնարանը պատերից ներս է” “Ինձ հասանելի է մենակ պատերից ներս կատարվողը” “Սառնարանը դրսի՞ մաս ես համարում” “Ես սառնարան չեմ տեսնում”...

Ու Եստեղ Շարաֆյանի հազարածալ ուղեղը փորձում էր գտնել գլուխկոտրուկի պատասխանը: Եթե սառնարանը ներսում էր, ինչու՞ հասանելի չէր Էդ արհեստականին, գուցե որովհետեւ մեջը գանձե՞ր են պահում:

Շարաֆյանը սառել ու մրոտվել էր, նստել էր պատի տակ, մի ոտքը ծալել, մյուսը մեկնել ու մտածում էր: Մի քանի թոպեից գնաց, ծածկոցներ վերցրեց, եկավ, բացեց սառնարանը, ներս մտավ ու դուռը փակեց. “Մարդն ամեն ինչին էլ սովորում է. սառնությանը պիտի սովորեմ, որ Եստեղ աշխատել կարողանամ” մի քանի թոպեից էլ սկսեց հետեւի պատը մասնատել, հենվեց դրա վրա իսկ դա ներս ընկավ ու բացվեց: “Գրողի տարաաած, Ես ի՞նչ դուռ է” արագ ետ մտավ սառնարան ու փորձեց դրա դուռը դեպի ներս բացել, բայց չէր ստացվում: “Չէեե, ոչ մի դեպքում, առանց օրագրիս չեմ գնա” ու մնաց Էդտեղ:

23 : 54

Շարաֆյանը քնած էր:

Առավոտյան սառնարանի ետեւի դուռը փակ էր, որովհետեւ անվտանգության համակարգն ինքն էրեւն փակվում էր կեսգիշերին, եթե հանկարծ ուտելիք բերողները չեն փակել: Էլ ոչինչ չէր հիշում: “Էս ու՞ր եմ, շատ ցուրտ է, ես ինչի՞ եմ սառնարանում”...

- Աո՛ւ, մարդ կա՞:

Բայց ոչ մի արձագանք:

Էլի

23 : 54

Հիշեց ու Էլի փորձեց բացել դուռը: Էս անգամ ստացվեց. սառնարանի մի դուռը չէր բացվում, եթե մյուսը բաց էր: Դա արված էր, որ սնունդ մատակարարողները միամիտ չբացեին դուռը ու բնակչի հետ երես առ երես տեսնեին իրար:

Գտնում է օրագիրն ու արագ արագ գրում երեկվա եղածը օրագիրը վերցնում հետը ու մտնում սառնարան: Դուռը փակում է, մյուսով դուրս գալիս ու վագոն տնակի պես մի բանի մեջ հայտնվում, որն ավելի շուտ խողովակ էր, քան տնակ:

Մի քիչ մեծ էր խողովակից ու ահագին փոքր տնակներից: Դրա պատերին առաստաղից ու գետնից առանձին նայելը դժվար էր, որովհետեւ միահյուսված էին: Ներսից ժանգի հոտ էր գալիս, պատերից ու ամեն տեղից երկաթի ժանգոտված կտորների ծեփ էր թափվում: Մրսած էր ու մի կերպ էր շարժվում: Մի քիչ պառկեց հանգստանալու, հետո Էլի շարունակեց ճանապարհը: Ու սնունդ բերող մեկը ելավ դեմը, ում բերանը սա փակեց, ու սա չգիտես ոնց միանգամից քնեց: Իրականում Էդպես էր վիրուսը: Վարակվելիս միանգամից քնում էիր: Դուրս եկավ ու ինչ-որ մոխրագույն աշխարհ ընկավ. ամպերը Էդպես փքված-ջղայնացած էին, անցուդարձն ապահովողները մոխրագույն էին հագած ու ձեռքներին սնունդ կար: Մնացածն էլ ոստիկանական համազգեստներով էին: Իր կեղտոտ սպիտակ շորերով, մրոտված դեմքով հաստատ աչքի էր ընկնելու, եթե արդեն չէր ընկել:

Միայն թե խողովակով ետ գնալն այլևս անհնար էր, որովհետեւ Էդտեղ ամենուր էլ խողովակներ էին: Մտավ առաջին պատահածը ու սպասում էր առաքիչներին: Մեկը ներս մտավ, բայց սրան վարակել փորձելը բարդ կլիներ, որովհետեւ հաղթանդամ էր ու իրեն կճզմեր երկու թոպեում:

-Լսիր, - Շարաֆյանը բռնեց առաքիչի ձեռքից, - ես հարուստ մարդ եմ, չգիտեմ՝ ինչ է կատարվում, ուր եմ հայտնվել, պատմելու ժամանակ էլ չկա, արի պայամնավորվենք, հագուստդ ինձ տուր, ես հետո քեզ լավ աշխատանք կտամ, միայն թե ազատվեմ ես կալանքից:

-Ո՞նց չէ, լավ առաջարկ էր: Կգնաս ապուշի տեղ ուրիշին կղնես, իսկ հիմա մի կողմ քաշվիր, - ու բրդեց Շարաֆյանին, սա էլ վայր ընկավ. առանց այդ էլ ուժ չունեիր, մի հատ էլ հարվա՞ծ: Ուշագնաց եղավ ու չգիտես էլ ինչքան մնաց այդտեղ:

Հաղթանդամ լինելը չի փրկի հիվանդի հետ շփվելուց ու չվարակվելուց: Շատ ճանապարհ չանցավ առաքիչը, որ ինքն էլ էնտեղ քնեց: Շարաֆյանը

արթնանալուն պես սկսեց քայլել, բայց ոչ դեպի դուրս. “Ես պես գոնե մեկի տուն կհասնեմ, թե չէ դրսում ինձ հում-հում կուտեն” Գնաց ու հանդիպեց մեր առաքիչին, ով իր քաշով քիչ մնար փոս գցեր հատակին: Ստիպված սրան հագուստագրկեց ու ինքը հագավ մոխրագույնը, վերցրեց ուտելիքն ու դուրս եկավ խողովակից:

Չգիտեր՝ ինչ պիտի աներ, երբ դուրս եկավ խողովակից: Ուղղակի մտավ առաջին պատահած խողովակն ու դուրս եկավ էն բոլորիս ծանոթ սովորական աշխարհը, որ դուրս եկավ, ետ նայեց. “Կանոններ” մեծ ու կարմիր տառերի տակ լիքը մանր գրվածքներ կային. “Երկրորդ անգամ նույն խողովակը մտնելը կարող է վտանգավոր լինել ոչ միայն ձեր, այլև ...” Դրա համար էլ ես խողովակ չէի մտնում, որովհետեւ այլ երկկողմանի բաց էր, ու դուրս գալու դեպքում էլ հետադարձի ճանապարհ չէր լինի, բայց դե Շարաֆյանն անկեղծ ասած ուրախ էլ էր, որ եղտեղ է հայտնվել:

Լիքը սովորականի պես տներ կային, շենքեր, ու հերթականի կողքով անցնելիս շրխկոցներ լսեց ու սոսնձվեց դռանը.

- Ջեեեյ, Էդտեղ մարդ կա՞, օգնեք ինձ, բացեք դուռը, խնդրում եմ:
- Ваш голос невозможно расшифровать...
- Էլի ես գրողի տարածք:
- Էդտեղ մա՞րդ կա, - լսվեց ներսից:
- Ջաա, հա, կա, բացեք դուռը, խնդրում եմ, շատ եմ խնդրում բացեք:
- Դուռը փակ է:
- Դրա համար էլ ասում եմ՝ բացեք: Բաց դռները չեն բացում:
- Ճիշտ չհասկացաք: Դուռը փակ է, ես բանալի չունեմ, վրձիններս դռներ չեն բացում:
- Իսկ ինչու՞ չունեք:
- Չգիտեմ: Մենակ հիշում եմ, որ ինքնաթիռում էիք, ընկերոջս հետ, ես հետո փախա:
- Մա՞յք:
- Ո՞վ է:
- Տիմար, ես եմ՝ Ռոբերտը, Շարաֆյանն է:
- Գրողի տարածք, որտե՞ղ էիր բա:
- Քեզ պես՝ չգիտեմ էլ:
- Ո՞նց ես դուրս եկել:
- Ու սկսեց կարդալ օրագիրը: Ես պես խոսեցին, պատմեցին, մինչեւ մթնեց:
- Մայք ժամը քանի՞սն է:
- Չգիտեմ:
- Նայիր, ապուշ:
- Ջա, հիմա:
- Մա՞յք: Մա՞յք, ու՞ր կորար:
- Եկա, եկա, զուգարան էի մտել:
- Լսիր, քեզ ժամն եմ հարցնում, դու ի՞նչ ես անում:
- Դե շատ էի ուզում, տակս հո չէի՞ անելու: Ողջ օրն էստեղ քեզ հետ եմ խոսում:
- Ժամն ասա:
- Մոռացա՞ նայեմ, սպասիր:
- Գուցե հիմա էլ հա՞ց ուտես:

-Ժամը տասներկունսն է... Ռո՞ք: Ռոքերտ,- արծագանք չկար,- ու՞ր կորավ հիմարը:

Առավոտյանը Շարաֆյանն արթնացավ ու չհասկացավ, թե ուր է: Սկսեց օրագիրը կարդալ: Դարձյալ ոչինչ չհասկացավ: Սառնարանում չէր, հաստատ:

-Մարդ կա՞ էստեղ:

-Եկա՞ր, հիմար,- լավեց ներսից,- քո կարծիքով զվարճալի է, հա՞, որ կեսգիշերին անհետանում ես: Հիմա բացատրություն կտաս:

-Ո՞վ է:

-Ռոք, դու՞ ես:

-Ես եմ, նույն ինքը Շարաֆյանը. ինչու՞ եք ինձ անունով դիմում: Եվ հետո, դրամապանակս ձեզ մո՞տ է:

-Այ, ապուշ, Մայքն է:

-Մա՞յք: Մի րոպե,- ու բացում է օրագիրը, փորձում հասկանալ, թե դա ով է,- ախ, Մայք: Ողջույն, վաղուց չենք տեսնվել: Իսկ էս որտե՞ղ եմ:

-Հիմար, երեկվանից էստեղ ես:

-Ախ, ուրեմն չեմ հասցրել գրել երեկվա եղածը:

-Այսի՞նքն:

-Դե ամեն օր հիշողությունս լրիվ ջնջվում է, մինչեւ տասներկունսը վեց րոպե ժամանակ եմ ունենում հիշելու. ինչ հիշում եմ՝ գրառում եմ:

-Էլի խմե՞լ ես:

-Չէ, ապուշ: Հիվանդ եմ երեւի, չգիտեմ: Երկու հոգու արդեն վարակել եմ, դրանք էլ միանգամից քնեցին: Ենթադրում եմ, որ հիվանդ եմ: Հիմա գիշերը կհիշեմ՝ ոնց եմ փախել ու կգրեմ, վաղը կպատմեմ քեզ:

-Լավ, իսկ ի՞նչ ենք անելու:

-Չգիտեմ, որ հիշեմ կխոսենք:

-Լավ:

Կեսգիշերին Շարաֆյանը հիշեց ամեն ինչ, գրեց ու քնեց:

Բայց առավոտյան գետնին չարթնացավ: Դռան վրա կապկպել էին՝ դրսի կողմից:

Օրագիրը ծոցն էր, լավ է՝ չէին նկատել: Էլի ոչինչ չէր հիշում, բայց կարդալ չէր կարող:

Մայքը ինքը պատմեց Շարաֆյանին Էն ամենն, ինչ հիշում էր:

Տասներկունսին էլ Շարաֆյանը պատմեց մնացածը.

-Բայց ոչ մի դեպքում չանցնես Էդ դռնով, լսու՞մ ես: Կահույքիդ ձեռք չտաս, դուրս գալու ուրիշ ելք փնտրի: Մեզ պետք չի, որ հիշողությունդ կորցնես, վարակվես մեկից: Չգուշ կլինես:

-Իսկ եթե դու՞ռը փորձեմ բացել:

-Վրձիներո՞վդ:

-Հիմար:

-Է՛յ, Մայք, չփորձես դուռը բացել, դռան հենց դիմաց փշեր են, լսու՞մ ես ապուշ:

-Լսում եմ:

-Դուռը եթե բացես, մեջս փշեր կմտնեն... Ես տունդ երկու հարկանի է, չէ՞:

-Չէ: Ին՞չ փշեր:

-Հա, հիմար, երկու հարկանի է: Չգիտեմ շուրջս ինչ-որ վարդի նման փշոտ ծաղիկներ են, դուռը որ բացես, ուղիղ դրանց մեջ եմ խրվելու:

-Չեմ բացի, բայց ես էս մի հարկն եմ տեսել մենակ:

-Պատուհանից կարո՞ղ ես դուրս գալ:

-Ճաղեր են վրան, չեմ կարող:

-Դե վերեւ բարձրացիր, տես Էնտեղ Է՛լ ճաղեր են:

-Ո՞նց բարձրանամ:

- Մի ձեռն ... Ու չմոռանա ամեն առավոտ ինձ իմ պատմածն ու քո հետ անցկացրած օրերը պատմել:
- Լավ, գնամ ելքը փնտրեմ:
- Ու Մայքը դեպի վեր ճանապարհն էր փնտրում. “Ո՞նց գտնե՛մ” “Ваш голос...” “Ինչի՞ հայերեն չես խոսում”... “Խնդրում ենք սպասել, լեզվի կարգավորումները ընթացքի մեջ են. այլ հրահանգներ”։ “Չկան”։
- Մի երկու ժամից լավեց. “Լեզվի կարգավորումներն արված են: Ձեր լեզուն հայերե՞նն է: Խնդրում ենք հաստատել պատասխանելով՝ “այո” կամ “ոչ”։ “Այո, այո” “Բարի, ի՞նչ կկամենաք”։
- Էստեղ երկրորդ հա՞րկ կա:
- Այո:
- Ո՞նց բարձրանամ:
- Աստիճան:
- Ի՞նչ:
- Փնտրեք աստիճանը:
- Էստեղ աստիճան չկա, ես լավ փնտրել եմ:
- Օգտագործեք ըստ նշանակության:
- Ի՞նչ:
- Աստիճանն օգտագործեք ըստ նշանակության:
- Ասում եմ՝ աստիճան չկա՛:
- Փնտրեք աստիճանը:
- Իջավ Շարաֆյանից խորհուրդ հարցնելու.
- Լսիր, Էս արհեստականն ասում է՝ աստիճան, անընդհատ կրկնում է աստիճան, աստիճան, ի՞նչ անեմ:
- Մենակ դա՞:
- Չէ՛, ասում է օգտագործիր ըստ նշանակության, բայց Էստեղ աստիճան չկա վստիա եմ:
- Ի՞նչ հարց ես տվել:
- Թե ոնց վերել բարձրանամ:
- Լսիր դրան, խելոք բաներ է ասում, օգնում է շատ: Ի՞նչ կա, որով կարող ես վերել բարձրանալ, փոխարինել աստիճանը:
- Դե սեղան կա, աթոռ, ես է բոյով եմ: Որ դրանց վրա կանգնեմ, գուցե լինի՞:
- Դե, դե գնա:
- Բարձրացավ ու գլուխը առաստաղին կանելուն պես այն պատռվեց. կտորից էր: Իսկ ո՞նց էր դրա վրա կանգնելու, եթե նույնիսկ բարձրանար, վայր կընկներ: “Փոխարինո՞ղ, հատակն է՛լ փոխարինեմ”։ Նստեց, մտածեց, չհասկացավ, գրքեր բերեց դրեց, որ դրանցով բարձրանա, սղում էին ու քանդվում: Ինչքան անպետք բան կար՝ բերեց, դասավորեց մի ձեռն, բարձրություն ստացավ ու մակերես, որի վրա կարող էր կանգնել: Որ բարձրացավ դրանց վրա, հասկացավ, որ հատակ վերելում, այնուամենայնիվ, կա, բայց հեռու էր: “Իսկ եթե ցատկեմ, ընկնեմ ու մի բան լինի՞ ինձ: Է՛, ոչ ոչ ոչ:”
- Չե՛յ, Մայք, արագացրու, Էս փշերը առանց դուռ բացելու էլ ինձ են մոտենում, արագացրու:
- “Դե, ուրեմն պիտի ցատկեմ, համ էլ ոտիկներս երկար են, - ու նայում է ոտքերին, հիանում դրանցով:
- Մայք, լսո՞ւմ ես, արագացրու:
- Չա՛, հա, լսում եմ, հիմա, - ու թռավ առանց երկար-բարակ մտածելու: Բա հետո՞:
- Չո երկրորդ հակից ցած չէ՞ր ցատկելու:
- Ո՛րբ, բարձրացա, բա հետո՞:

- Յետո ի՞նչ, տխմար, պատուհանը բացիր, ցատկիր:
- ՉԷ՛, չեմ կարող: ՉԷ:
- Մայք, կմեռնեմ եստեղ կապված, արագացրու:
- Ո՞վ էր ինդրում՝ գայիր: Հանգիստ նստած էի ես: Ոչ էլ դուրս գալ էր պետք ինձ, - ու արդեն լացում էր:
- Լավ, Մայք: Կներես, շարունակիր գործերդ:
- Ապուշ, ես քեզ սիրում եմ, հիմա հո չե՞մ թողնելու մեռնես:

Ինչ տեսավ-չտեսավ՝ դուրս նետեց պատուհանից: “Ես գրողի տարածները, ո՞նց անեմ: Իրար վրա չեն դարսվում, ի՞նչ անեմ” ու շարունակում էր նետել: “Բա որ սրանց կանեմ ու վնասվեմ, դռնակը, գնամ դռնակը... Եսքան պիտի իջնե՞մ նորից: Ո՞նց:” Ու իր հետ խոսելով, ինքն իրեն ոգեւորելով իջավ, դռնակը վերցրեց, բարձրացավ. “Մեջքս, Ես ծանր դռնակը Եսքան բարձացրեցի ախր, հանգստանա՞մ, թե նա նտեղ կմեռնի” նետեց դռնակը, ինքն էլ ետեւից նետվեց:

- Եկա, Ռո՛բ,- ու վազում էր խելակորույս, մազերն էլ աչքերը ծածկում էին, դիմացը չէր տեսնում, բայց վազում էր: Կանգնեց,- ծխախոտս,- ասաց ինքն իրեն:
 - Մա՛յք, կերան ինձ, հասի՛:
 - Եկա՛,- ու մոռացավ ծխախոտը:
 - Ռո՛բ, ինչ կեղտոտ ես, ես քեզ չեմ կանի, ֆուու, զզվելի հոտ է գալիս վրայիցդ:
 - Դու քեզ տեսե՞լ ես: Փնթի, մազերդ բերանդ են լցվում, վրայի յուղն էլ հեսա ինձ կուտի: Իսկ ներկերդ, նորմալ շոր չունեի՞ր՝ հագնեիր: Կապերս արձակիր:
 - ՉԷ՛, զզվելի ես:
 - Կապերս արձակիր, վերջդ եմ տալու, շան որդի:
 - Չեմ արձակի, ինձ չկանես, եթե արձակեմ:
 - Լավ:
 - Խոսք տուր: Ես չեմ հավատում:
 - Լավ, լավ, խոսք եմ տալիս, արագացրու:
- Եսպես կռվով-դավով արձակեց, ու երկուսով սկսեցին վազել՝ Աստված գիտի, թե ուր: Հասան ինչ-որ ինքնաթիռի, որն արդեն ուղղակի մետաղի ջարդոն էր, ու որից մենակ փտած ուտելիքի ու ռադիոյի հոտ էր գալիս. “Հաքերները կարողացել են կտորել սերվերը ու արհեստական բանականություն մտցնել, որոնք կօգնեն մարդկանց փախչել”...